

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Շահութահարկի հաշվարկի (ներառյալ՝ դրա անբաժանելի մասը կազմող 1-ից 6-րդ աղյուսակներում) լրացման հաշվարկում թվային տվյալները լրացվում են հազար դրամներով, իսկ շահութահարկի հաշվարկին մասնակցող հանվող գումարները (բացասական մեծությունները) ցույց են տրվում փակագծերի մեջ)

Շահութահարկի հաշվարկում (այսուհետ՝ Հաշվարկ) լրացվում են.

- "Փաստաթղթի համարը" մասում՝ հարկային մարմնում հարկ վճարողի (ռեզիդենտի) առկա անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը,
- "Հարկ վճարողի անվանումը" մասում՝ ռեզիդենտի ֆիրմային անվանումը եւ կազմակերպաիրավական ձեւը,
- "Հարկ վճարողի հասցեն" մասում՝ ռեզիդենտի իրավաբանական հասցեն,
- "ՀՎՀՀ" մասում՝ ռեզիդենտի հարկ վճարողի հաշվառման համարը.
- "Հեռախոսի համարը" մասում՝ ռեզիդենտի տնօրենի (ղեկավարի) եւ (կամ) հաշվապահի հեռախոսի համարը,
- "Հաշվետու տարի" մասում՝ այն տարին, որի համար լրացվում է Հաշվարկը,
- "Ներկայացման ամսաթիվը" մասում՝ ռեզիդենտի կողմից հարկային մարմին Հաշվարկը ներկայացնելու ամսաթիվը:

Հաշվարկի վերջին էջի համապատասխան մասում նշվում են ռեզիդենտի ղեկավարի եւ հաշվապահի անունը (ազգանունը), որոնք ստորագրում են Հաշվարկը, եւ Հաշվարկը կնքվում է ռեզիդենտի կնիքով:

1. Հաշվարկի 1-ին բաժնում ("Հաշվետու տարվա համախառն եկամուտը") ցույց է տրվում հաշվետու ժամանակաշրջանում ռեզիդենտի գործունեության արդյունքում ստացված համախառն եկամուտը՝ "Շահութահարկի մասին" ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ, 24-րդ, 42-րդ եւ 43-րդ հոդվածներին համապատասխան: Այս բաժնում չեն ներառվում Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն եկամուտ չհամարվող տարրերը:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0101 տող՝ ապրանքների իրացումից (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության դեպքում) ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0102 տող՝ սեփական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0103 տող՝ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0104 տող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հանձնարարության, կոմիսիայի եւ գործակալության գործարքներից միջնորդավճարների ձեւով (զանձույթ, պարգեւավճար եւ հատուցման համանման այլ ձեւերով) ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0105 տող՝ հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հունքի (նյութի) եւ այլ ակտիվների իրացումից ստացվող եկամուտները (իրացումից հասույթը):

0106 տող՝ վարկի, փոխառության, ֆինանսական վարձակալության դիմաց ստացվող տոկոսները եւ այլ հատուցումը:

0107 տող՝ գործառնական վարձակալության դիմաց ստացվող վճարները եւ այլ հատուցումը (վարձավճարները):

0108 տող՝ ստացվող ռոյալթիները:

0109 տող՝ ստացված շահաբաժինները:

0110 տող՝ ապահովագրական հատուցումները, որոնք ստացվել են ապահովագրության (վերաապահովագրության) պայմանագրերի համաձայն:

0111 տող՝ ապահովագրական պահուստներից հատուցման նպատակով վերադարձվող միջոցները:

0112 տող՝ անհատույց ստացված ակտիվները (այս տողը լրացվում է միայն առետրային կազմակերպությունների կողմից), ընդ որում՝ անհատույց ստացված դրամական միջոցների եւ հողամասերի համար այս տողը լրացվում է դրանց ստացման հաշվետու տարում, իսկ անհատույց ստացված այլ ակտիվների համար՝ այն հաշվետու տարում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ (անկախ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից):

0113 տող՝ պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները (բացառությամբ՝ օրենքով տրվող հարկային արտոնությունների):

0114 տող՝ պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից ստացվող եկամուտները (իրական վնասը, բաց թողնված օգուտը):

0115 տող՝ տույժեր, տուգանքներ) եւ գույքային այլ սանկցիաների տեսքով ստացվող եկամուտները:

0116 տող՝ գույքագրման արդյունքներով հայտնաբերված ակտիվների ավելցուկը:

0117 տող՝ սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները (բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 15.07.2003 թ. N 248-Ն որոշմամբ եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 11.08.2003 թ. N 662-Ա հրամանով հաստատված "Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ վարկային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման" կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված "Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման" կարգի համաձայն):

0118 տող՝ նախկինում դուրս գրված (այդ թվում՝ մասնակի) դեբիտորական պարտքերի (վարկերի) հետ ձեւակերպման (այդ թվում՝ մարման) եւ դեբիտորական պարտքերի (վարկերի) հնարավոր կորուստների պահուստների ճշգրտման արդյունքում եկամուտներին վերագրվող գումարները (բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.04.1999 թ. N 63 որոշմամբ եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 04.06.1999 թ. N 214-Ա հրամանով հաստատված "Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման եւ հնարավոր կորուստների պահուստների ձեւավորման" կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված "Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման ու դուրսգրման" կարգի համաձայն):

0119 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ նախորդ 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտները կամ ավել ցույց տրված նվազեցումները:

0119Ա տող՝ ստուգմամբ հայտնաբերված՝ հաշվետու տարվանը նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտները կամ ավել ցույց տրված նվազեցումները (անկախ այդ եկամուտների եւ նվազեցումների տեսակից կամ հաշվապահական հաշվառմանը համապատասխան՝ դրանց որպես եկամուտ կամ ծախս ճանաչումից):

0120 տող՝ ստացվող այլ եկամուտները:

0100 տող՝ ստացվող բոլոր եկամուտները (համախառն եկամուտը)՝ որպես 0101-ից

0120 տողերի (բացառությամբ՝ 0119Ա տողի) հանրագումար: Այդ տողում ներառվում են "Հաստատագրված վճարների մասին" եւ "Բենզինի եւ դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին" ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու ժամանակաշրջանում ստացվող եկամուտները: Այդ տողում չեն ներառվում "Պարզեցված հարկի մասին" ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվետու տարում պարզեցված հարկով հարկվող ժամանակաշրջանում ստացվող եկամուտները:

0100Ա տող՝ "Հաստատագրված վճարների մասին" եւ "Բենզինի եւ դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին" ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով ստացվող եկամուտները:

2. Հաշվարկի 2-րդ բաժնում ("Համախառն եկամտից նվազեցումներ") ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից կատարված՝ Օրենքի 9-րդ հոդվածով դասակարգված նվազեցումները (ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ):

2.1. Հաշվարկի 2.1 ենթաբաժնում ("Համախառն եկամտից նվազեցվող ծախսերը") ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից նվազեցվող ծախսերը՝ Օրենքի 10-րդ, 12-17-րդ, 19-րդ, 32-րդ, 42-րդ եւ 43-րդ (բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար՝ նաեւ 30-րդ, իսկ ապահովագրական կազմակերպությունների համար՝ նաեւ 31-րդ) հոդվածներին համապատասխան: Այս ենթաբաժնում չեն ներառվում Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ծախս չհամարվող տարրերը եւ 16-րդ հոդվածի համաձայն համախառն եկամտից չնվազեցվող ծախսերը:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0201 տող՝ իրացված ապրանքների ձեռքբերման հետ անմիջականորեն կապված ծախսերը:

0202 տող՝ իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերը:

0203 տող՝ մատուցված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի եւ գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը:

0204 տող՝ իրացված հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հունքի (նյութի) եւ այլ ակտիվների մնացորդային արժեքը (հարկային բազա), ընդ որում՝ որպես իրացված մաշվող ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ) մնացորդային արժեք (հարկային բազա) ընդունվում է այդ ակտիվների սկզբնական արժեքի եւ Օրենքով սահմանված կարգով հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերությունը (հաշվի առած՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները), իսկ այլ ակտիվների դեպքում՝ այդ ակտիվների սկզբնական արժեքը (հաշվի առած՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները):

0205 տող՝ իրացված ապրանքների, սեփական արտադրանքի եւ այլ ակտիվների, մատուցված ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի եւ գործակալության գործարքների հետ անմիջականորեն կապված ծախսերը (ուղղակի ծախսեր)՝ որպես 0201-ից 0204 տողերի հանրագումար:

0206 տող՝ ռեզիդենտի գործունեության հետ կապված վարչական ծախսերը:

0207 տող՝ ապրանքների, արտադրանքի եւ այլ ակտիվների, ծառայությունների, հանձնարարության, կոմիսիայի եւ գործակալության գործարքների իրացման հետ կապված ծախսերը:

0208 տող՝ ռեզիդենտի կողմից կատարված ոչ արտադրական այլ ծախսերը:

0209 տող՝ ռեզիդենտի ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը:

0210 տող՝ ռեզիդենտի կողմից կատարված վարչական, իրացման եւ ոչ արտադրական այլ ծախսերը, ինչպես նաեւ ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը (ժամանակաշրջանի ծախսեր)՝ որպես 0206-ից 0209 տողերի հանրագումար:

0220 տող՝ ռեզիդենտի կողմից կատարված ուղղակի եւ ժամանակաշրջանի ծախսերը՝ որպես 0205 եւ 0210 տողերի հանրագումար:

2.2. Հաշվարկի 2.2 ենթաբաժնում ("Համախառն եկամտից նվազեցվող կորուստները") ցույց են տրվում հաշվետու տարում ռեզիդենտի համախառն եկամտից նվազեցվող (փաստաթղթերով հիմնավորված) փաստացի կորուստները՝ Օրենքի 21-րդ եւ 22-րդ հոդվածներին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0231 տող՝ գույքի պատահական կորուստները:

0232 տող՝ գույքի բնական կորուստները (ՀՀ կառավարության 29.04.1999 թ. "Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը սահմանելու կարգի մասին" N 272 որոշման համաձայն բնական կորստի չափերը հաստատում են նախարարությունները (գերատեսչությունները)՝ համաձայնեցնելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ):

0233 տող՝ գույքի փաստացի այլ կորուստները (փաստացի այլ կորուստների չափերը սահմանում է ՀՀ կառավարությունը):

0234 տող՝ գույքի բնական կամ փաստացի այլ կորուստների չափերը գերազանցող (այդ թվում՝ այդպիսի չափեր սահմանված չլինելու դեպքում) կորուստները (վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցելու դեպքում, վնաս պատճառած անձին չպարգելու հետեւանքով

նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում, անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում):

0230 տող՝ ռեզիդենտի գույքի փաստացի կորուստները՝ որպես 0231-ից 0234 տողերի հանրագումար:

2.3. Հաշվարկի 2.3 ենթաբաժնում ("Համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները") ցույց են տրվում համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները՝ Օրենքի 18-րդ, 20-րդ, 23-րդ, 25-29-րդ եւ 32-րդ (բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար՝ նաեւ 30-րդ, իսկ ապահովագրական կազմակերպությունների համար՝ նաեւ 31-րդ) հոդվածներին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում:

0241 տող՝ սահմանված կարգով դուրս գրված (այդ թվում՝ մասնակի) դեբիտորական պարտքերի (վարկերի) եւ դեբիտորական պարտքերի (վարկերի) հնարավոր կորուստների պահուստների ճշգրտման արդյունքում նվազեցումներին վերագրվող գումարները (բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.04.1999 թ. N 63 որոշմամբ եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 04.06.1999 թ. N 214-Ա հրամանով հաստատված "Հայաստանի Հանրապետության տարածքում բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման եւ հնարավոր կորուստների պահուստների ձեւավորման" կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված "Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման ու դուրսգրման" կարգի համաձայն):

0242 տող՝ նախկինում դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները (բանկերի եւ վարկային կազմակերպությունների համար՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 15.07.2003 թ. N 248-Ն որոշմամբ եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 11.08.2003 թ. N 662-Ա հրամանով հաստատված "Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի եւ վարկային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման" կարգի համաձայն, այլ կազմակերպությունների համար՝ ՀՀ կառավարության 19.12.2002 թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված "Կազմակերպությունների (բացառությամբ՝ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման" կարգի համաձայն):

0243 տող՝ հաշվետու տարում հայտնաբերված (այդ թվում՝ ստուգմամբ)՝ նախորդ 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտները կամ պակաս ցույց տրված նվազեցումները:

0243Ա տող՝ հաշվետու տարում ստուգմամբ հայտնաբերված՝ նախորդ 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտները կամ պակաս ցույց տրված նվազեցումները (անկախ այդ եկամուտների եւ նվազեցումների տեսակից կամ հաշվապահական հաշվառմանը համապատասխան՝ դրանց որպես ծախս կամ եկամուտ ճանաչումից):

0244 տող՝ ոչ առետրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին եւ մանկատներին, ինչպես նաեւ հոգեբուժական եւ հակաթրոքախտային դիսպանսերներին եւ հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցները, նրանց մատուցված ծառայությունների արժեքը (համախառն եկամտի 0.25%-ի սահմաններում):

0245 տող՝ ստացված շահաբաժինները:

0246 տող՝ համախառն եկամտից նվազեցվող՝ նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը (Օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան): Սույն նվազեցման կիրառման առումով համախառն եկամտից նվազեցումը կատարվում է միայն հարկային մարմին ներկայացված՝ նախորդ տարվա շահութահարկի հաշվարկի համապատասխան տողում հարկային վնասի գումարը ցույց տալու դեպքում:

0247 տող՝ ռեզիդենտի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի եւ դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը՝ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն:

0248 տող՝ համախառն եկամտից նվազեցվող այլ նվազեցումները:

0240 տող՝ ռեզիդենտի այլ նվազեցումները՝ որպես 0241-ից 0248 տողերի (բացառությամբ՝ 0243Ա տողի) հանրագումար:

0200 տող՝ համախառն եկամտից կատարված բոլոր նվազեցումները՝ որպես 0220, 0230 եւ 0240 տողերի հանրագումար: Այդ տողում ներառվում են "Հաստատագրված վճարների մասին" եւ "Բենզինի եւ դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին" ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով հաշվետու տարում կատարված նվազեցումները: Այդ տողում չեն ներառվում "Պարզեցված հարկի մասին" ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվետու տարում պարզեցված հարկով հարկվող ժամանակաշրջանում կատարված ծախսերը:

0200Ա տող՝ "Հաստատագրված վճարների մասին" եւ "Բենզինի եւ դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին" ՀՀ օրենքներով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով կատարված նվազեցումները:

3. Հաշվարկի 3-րդ բաժնում ("Հարկվող շահույթը (հարկային վնասը)") ցույց է տրվում հաշվետու տարում շահութահարկով հարկվող գործունեությունից ռեզիդենտի ստացված հարկվող շահույթը (համախառն եկամտի եւ նվազեցումների դրական տարբերությունը) կամ հարկային վնասը (համախառն եկամտի եւ նվազեցումների բացասական տարբերությունը):

Համապատասխան տողերում լրացվում են հաշվետու տարում.

0301 տող՝ շահութահարկով հարկվող գործունեությունից ստացված հարկվող շահույթը կամ հարկային վնասը (առանց ստուգման արդյունքների)՝ որպես 0100 եւ (0100Ա, 0119Ա) տողերի տարբերության ու 0200 եւ (0200Ա, 0243Ա) տողերի տարբերության հանրագումար:

0302 տող՝ ստուգման արդյունքները՝ որպես 0119Ա եւ 0243Ա տողերի հանրագումար:

0300 տող՝ շահութահարկով հարկվող գործունեությունից ստացված հարկվող շահույթը կամ հարկային վնասը (ներառյալ՝ ստուգման արդյունքները)՝ որպես 0301 եւ 0302 տողերի հանրագումար: Ընդ որում, որպես հաշվետու տարվա հարկային վնաս հաջորդ տարի փոխանցվում է 0300 տողում նշված բացասական գումարը:

4. Հաշվարկի 4-րդ բաժնում ("Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները") եւ 0400 տողում ցույց են տրվում "Հարկերի մասին" ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնության գումարները: Այս բաժինը լրացվում է նաեւ օրենքով սահմանված շահութահարկի ազատման արտոնությունների դեպքում:

5. Հաշվարկի 5-րդ բաժնում ("Հարկվող շահույթը՝ հաշվի առած հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները) եւ 0500 տողում ցույց են տրվում հաշվետու տարվա հարկվող շահույթը (հաշվի առած օրենքով սահմանված հարկվող օբյեկտի (հարկվող շահույթի) նվազեցման արտոնությունները)՝ որպես 0300 եւ 0400 տողերի հանրագումար, կամ հարկային վնասը՝ 0300 տողում նշված գումարի չափով:

6. Հաշվարկի 6-րդ բաժնում ("Հաշվետու տարվա շահութահարկի գումարը") ցույց են տրվում հաշվետու տարվա հաշվարկված շահութահարկի գումարը (տող0600)՝ որպես 0500 տողի եւ 20%-ի արտադրյալ, ինչպես նաեւ հաշվետու տարում ստուգմամբ հայտնաբերված լրացուցիչ շահութահարկի գումարները (տող0600Ա):

7. Հաշվարկի 7-րդ բաժնում ("Շահութահարկի վճարման հետաձգման արտոնությունները") ցույց են տրվում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունների (այդ թվում՝ Օրենքի 40-րդ եւ 401-րդ հոդվածներով սահմանված) գումարները:

Համապատասխան տողերում լրացվում են.

0701 տող՝ նախորդ տարիներում հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ չեն ստացվել:

0702 տող՝ հաշվետու տարում շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվելու դեպքում՝ հետաձգված շահութահարկի գումարները, որոնց մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռեւս չեն ստացվել:

0703 տող՝ հաշվետու տարում ստացված գումարներին համապատասխան շահութահարկի գումարները, որոնք վերաբերում են նախորդ տարիներից հետաձգված շահութահարկի գումարներին:

0700 տող՝ հաշվետու տարվա շահութահարկի գումարը (հաշվի առած շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը)՝ որպես 0600, 0702 եւ 0703 տողերի հանրագումար:

0700Ա տող՝ հաջորդ տարիներ հետաձգված շահութահարկի գումարը, որոնք մասով համապատասխան գումարներ հաշվետու տարվա ավարտին դեռեւս չեն ստացվել՝ որպես 0701, 0702 եւ 0703 տողերի հանրագումար:

8. Հաշվարկի 8-րդ բաժնում ("Օտարերկրյա պետություններում վճարված շահութահարկի գումարը") ցույց են տրվում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված (գանձված) հարկի գումարների նվազեցվող մասը՝ Օրենքի 52-րդ հոդվածին համապատասխան, որոնք նվազեցվում են մինչեւ շահութահարկի նվազեցման արտոնությունների կիրառումը եւ Օրենքի 521-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողի գումարից):

Համապատասխան տողերում լրացվում են.

0801 տող՝ նախորդ հաշվետու տարիներում օտարերկրյա պետություններում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը չի նվազեցվել նախորդ տարիների շահութահարկի գումարներից եւ ենթակա է նվազեցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից:

0802 տող՝ հաշվետու տարում օտարերկրյա պետություններում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը ենթակա է հաշվանցման հաշվետու կամ հետագա տարիների շահութահարկի գումարներից:

0800 տող՝ օտարերկրյա պետություններում հաշվետու եւ նախորդ տարիներում վճարված (գանձված) շահութահարկի գումարների հաշվանցվող մասը, որը ենթակա է հաշվանցման հաշվետու տարվա շահութահարկի գումարից:

0800Ա տող՝ օտարերկրյա պետություններում հաշվետու եւ նախորդ տարիներում վճարված (գանձված) շահութահարկի գումարների այն մասը, որը ենթակա է հաշվանցման հաջորդ տարիների շահութահարկի գումարներից՝ որպես 0801 եւ 0802 տողերի հանրագումարի ու 0800 տողի գումարի տարբերություն:

9. Հաշվարկի 9-րդ բաժնում ("Ձեռք սակագնով (անվճար) ծառայություններից չստացված եկամուտը") ցույց են տրվում առանձին խմբերի քաղաքացիներին օրենքով կամ օրենքով սահմանված դեպքերում՝ ՀՀ կառավարության սահմանած զեղչ սակագներով կամ անվճար մատուցված ծառայությունների հետեւանքով չստացված եկամուտների գումարները՝ Օրենքի 521-րդ հոդվածին համապատասխան, որոնք նվազեցվում են մինչեւ շահութահարկի նվազեցման արտոնությունների կիրառումը կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 եւ 0800 տողերի հանրագումարից):

Համապատասխան տողերում լրացվում են.

0901 տող՝ նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետեւանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը չի նվազեցվել նախորդ տարիների շահութահարկի գումարներից եւ ենթակա է հաշվանցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից:

0902 տող՝ հաշվետու տարում այդ ծառայությունների մատուցման հետեւանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաշվետու կամ հաջորդ տարիների շահութահարկի գումարներից:

0900 տող՝ հաշվետու եւ նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետեւանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաշվետու տարվա շահութահարկի գումարից:

0900Ա տող՝ հաշվետու եւ նախորդ տարիներում այդ ծառայությունների մատուցման հետեւանքով չստացված եկամուտների նվազեցվող մասը, որը ենթակա է նվազեցման հաջորդ տարիների շահութահարկի գումարներից՝ որպես 0901 եւ 0902 տողերի հանրագումարի ու 0900 տողի գումարի տարբերություն:

10. Հաշվարկի 10-րդ բաժնում ("Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց հետո") եւ 1000 տողում ցույց է տրվում շահութահարկի գումարը՝ հարկվող շահույթի նվազեցման եւ շահութահարկի վճարման ժամկետի արտոնությունները կիրառելուց, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններում վճարված հարկի եւ զեղչ սակագներով (անվճար) մատուցված ծառայությունների հետեւանքով չստացված եկամուտների գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 0700, 0800 եւ 0900 տողերի հանրագումար:

11. Հաշվարկի 11-րդ բաժնում ("Շահութահարկի նվազեցման արտոնությունները") ցույց են տրվում շահութահարկի նվազեցման արտոնությունների գումարները (այդ թվում՝ Օրենքի 36-րդ, 39-րդ եւ 391-րդ հոդվածներով սահմանված, որոնք նվազեցվում են մինչեւ Օրենքի 521-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները կազմող շահութահարկի գումարից (այսինքն՝ 0700 տողի գումարից)

Համապատասխան տողերում լրացվում են.

1101 տող՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված ռեզիդենտ կազմակերպությունների կողմից՝ Օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան:

1102 տող՝ օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների կողմից՝ Օրենքի 39-րդ հոդվածին համապատասխան:

1103 տող՝ ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտու կազմակերպչի կողմից՝ Օրենքի 391-ին հոդվածի 1-ին մասին համապատասխան:

1104 տող՝ ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտու շահագործողների կողմից՝ Օրենքի 391-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

1105 տող՝ օրենքով սահմանված շահութահարկի նվազեցման այլ արտոնությունները:

1100 տող՝ հաշվետու տարում շահութահարկի նվազեցման արտոնությունների ընդհանուր գումարը՝ որպես 1101-ից 1105 տողերի հանրագումար:

12. Հաշվարկի 12-րդ բաժնում ("Շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց եւ արտոնությունները կիրառելուց հետո") եւ 1200 տողում ցույց է տրվում շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններում վճարված հարկի եւ զեղչ սակագներով (անվճար) մատուցված ծառայությունների հետեւանքով չստացված եկամուտների գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 1000 եւ 1100 տողերի հանրագումար (եթե $[տող1000]+[տող1100]<0$, ապա $[տող1200]=0$):

13. Հաշվարկի 13-րդ բաժնում ("ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը") ցույց է տրվում ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը՝ հաշվի առած Օրենքի 471-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարը (որպես նվազագույն շահութահարկի ամսական գումարների հանրագումար):

Համապատասխան տողերում լրացվում են.

1301 տող՝ շահութահարկի գումարը՝ արտոնությունները (այդ թվում՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց հետո (այսինքն՝ 0700 եւ 1000 տողերի հանրագումար), որը համեմատվում է հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն շահութահարկի տարեկան գումարի հետ (հաշվետու տարում շահութահարկից ազատված կամ 100%-ով արտոնությունից օգտվող ռեզիդենտները այս տողը չեն լրացնում):

1302 տող՝ հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի գումարը՝ որպես նվազագույն շահութահարկի ամսական գումարների հանրագումար:

1303 տող՝ հաշվետու տարվա համար լրացուցիչ վճարման ենթակա նվազագույն շահութահարկի գումարը (լրացվում է, եթե 1302 եւ 1301 տողերի տարբերությունը դրական է):

1300 տող՝ հաշվետու տարվա համար վճարման ենթակա շահութահարկի գումարը՝ որպես 1200 եւ 1303 տողերի հանրագումար (եթե 1302 եւ 1301 տողերի տարբերությունը բացասական է, ապա այդ տարբերությունը առաջնահերթ հաշվանցվում է նախորդ տարիներին վճարված եւ շահութահարկի գումարներից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարներից):

14. Հաշվարկի 14-րդ բաժնում ("Նվազագույն շահութահարկի վճարումները") ցույց են տրվում վճարված եւ շահութահարկի գումարներից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները՝ Օրենքի 471-րդ հոդվածներին համապատասխան:

Համապատասխան տողերում լրացվում են.

1401 տող՝ նախորդ տարիներում վճարված եւ շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները:

1402 տող՝ հաշվետու տարում վճարված եւ շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները:

1400 տող՝ հաջորդ տարիներ փոխանցվող՝ վճարված եւ չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները՝ որպես 1401 եւ 1402 տողերի հանրագումար:

15. Հաշվարկի 15-րդ բաժնում ("Հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը") ցույց են տրվում հաշվետու տարվանը հաջորդող տարվա համար հաշվարկված շահութահարկի կանխավճարների ամսական գումարները՝ Օրենքի 47-րդ հոդվածին համապատասխան: Ընդ որում, հաշվետու տարվանը հաջորդող տարում շահութահարկի նվազեցման արտոնությունից օգտվող ռեզիդենտները կանխավճարի մեծությունը պակասեցնում են այդ (հաշվետու տարվանը հաջորդող) տարվա շահութահարկի նվազեցման չափով (տոկոսով)՝ արտոնությունից օգտվելու ժամանակաշրջանում:

Համապատասխան տողերում լրացվում են.

1501 տող՝ շահութահարկի գումարը՝ օրենքով սահմանված արտոնությունները բացառությամբ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունները) կիրառելուց, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարների նվազեցումները կատարելուց հետո՝ որպես 0700 եւ 0800 տողերի հանրագումար:

1502 տող՝ հաշվետու տարվա հաշվարկված պարզեցված հարկի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված եւ հաշվետու տարվանը վերաբերող պարզեցված հարկի գումարների) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը:

1503 տող՝ հաշվետու տարվա հաշվարկված հաստատագրված վճարի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված եւ հաշվետու տարվանը վերաբերող հաստատագրված վճարի գումարների) մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարը:

1504 տող՝ հաշվետու տարվանը հաջորդող տարվա շահութահարկի ամսական կանխավճարներին վերաբերող շահութահարկի նվազեցման արտոնության գումարը:

1500 տող՝ հաջորդ տարվա շահութահարկի կանխավճարների ամսական գումարը՝ որպես 1501, 1502 եւ 1503 տողերի հանրագումարի 1/16-ի եւ 1504 տողի հանրագումար:

16. Հաշվարկի աղյուսակ 1-ում նշվում են հաշվետու տարում հաշվարկված նվազագույն շահութահարկի ամսական գումարները եւ դրանց հանրագումարը՝ նվազագույն շահութահարկի տարեկան գումարը:

17. Ռեզիդենտները (բացառությամբ՝ բանկերի եւ վարկային կազմակերպությունների) աղյուսակ 2-ում նշում են Օրենքի 3-րդ հոդվածին, 7-րդ հոդվածի 2-րդ կետի "ժե" եւ "ժզ" ենթակետերին, 18-րդ հոդվածին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, հարկման նպատակով անհրաժեշտ հետեւյալ տեղեկությունները.

ա) նախորդ եւ հաշվետու տարիներում դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծման մասին (համապատասխանաբար՝ 1-ին տող 3-րդ սյունակ եւ 1-ին տող 4-րդ սյունակ).

բ) սահմանված կարգով ստեղծված դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի)՝ նախորդ եւ հաշվետու տարիների դեկտեմբերի 31-ի ավարտին մեծության մասին (համապատասխանաբար՝ 2-րդ տող 3-րդ սյունակ եւ 2-րդ տող 4-րդ սյունակ).

գ) սահմանված կարգով դուրս գրված անհուսալի դեբիտորական այն պարտքերի գումարների մասին, որոնք մինչեւ կետանցված դառնալու օրվան հաջորդող 3 տարի լրանալը նախորդ եւ հաշվետու տարիների ավարտին չեն մարվել կամ դադարել այլ հիմքով (համապատասխանաբար՝ 3-րդ տող 3-րդ սյունակ եւ 3-րդ տող 4-րդ սյունակ).

դ) սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական այն պարտքերի գումարների մասին, որոնք մինչեւ կետանցված դառնալու օրվան հաջորդող 3 տարի լրանալը նախորդ եւ հաշվետու տարիների ավարտին

չեն մարվել կամ դադարել այլ հիմքով (համապատասխանաբար՝ 4-րդ տող 3-րդ սյունակ եւ 4-րդ տող 4-րդ սյունակ):

18. Ռեզիդենտները աղյուսակ 3-ում նշում են Օրենքի 3-րդ եւ 12-րդ հոդվածներին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, հարկման նպատակով անհրաժեշտ՝ նախորդ եւ հաշվետու տարիներում հիմնական միջոցների համար, իրենց կողմից ընտրված ամորտիզացիոն ժամկետները (ամիսների թվով արտահայտված)՝ ըստ հիմնական միջոցների կամ դրանց խմբերի (համապատասխանաբար՝ 3-րդ եւ 4-րդ սյունակներ): Եթե աղյուսակում տողերի քանակը չի բավարարում, ապա այն շարունակվում է հաշվարկին կից ներկայացված լրացուցիչ թերթերում՝ պահպանելով աղյուսակի կառուցվածքը:

19. Ռեզիդենտները աղյուսակ 4-ում նշում են Օրենքի 3-րդ եւ 12-րդ հոդվածներին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, հարկման նպատակով անհրաժեշտ՝ նախորդ եւ հաշվետու տարիներում ոչ նյութական ակտիվների համար իրենց կողմից ընտրված ամորտիզացիոն ժամկետները (ամիսների թվով արտահայտված)՝ ըստ ոչ նյութական ակտիվների կամ դրանց խմբերի (համապատասխանաբար՝ 3-րդ եւ 4-րդ սյունակներ): Եթե աղյուսակում տողերի քանակը չի բավարարում, ապա այն շարունակվում է հաշվարկին կից ներկայացված լրացուցիչ թերթերում՝ պահպանելով աղյուսակի կառուցվածքը:

20. Ռեզիդենտները աղյուսակ 5-ում նշում են հաշվետու տարում համախառն եկամտից նվազեցվող հետեւյալ ծախսերը.

ա) "ա" բաժնում նշվում են Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված այն ծախսերը, որոնց համար սահմանված են չափեր (աղյուսակում նշվում են համապատասխան չափերը (գումարային արտահայտությամբ) եւ ռեզիդենտի կողմից կատարված համապատասխան ժամանակաշրջանի ծախսերը՝ անկախ սահմանված չափերի գերազանցման հանգամանքից)՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար վճարները,
- ՀՀ տարածքից դուրս կադրերի պատրաստման համար կատարված ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս կադրերի վերապատրաստման համար կատարված ծախսերը,
- ներկայացուցչական ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս գովազդի համար կատարված ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս մարքեթինգի ծախսերը,
- ՀՀ տարածքից դուրս գործուղման ծախսերը,
- ՀՀ տարածքում օրապահիկի ծախսերը,
- դաշտային բավարարման ծախսերը,
- հատուկ սննդի համար կատարված ծախսերը,
- արտահագուստի եւ այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը,
- առողջապահական հիմնարկների, ծերերի եւ հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական եւ մարզական հիմնարկների, ինչպես նաեւ բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար կատարված ծախսերը,
- աշխատակիցներին օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար կատարված ծախսերը,
- վարկերի եւ փոխառությունների տոկոսները.

բ) "բ" բաժնում նշվում են ծախսերը՝ ըստ Օրենքի 10-րդ, 12-րդ եւ 13-րդ հոդվածներով թվարկվածների՝

- աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,
- հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները,
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) գույքահարկը,

- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հողի հարկը,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) ավելացված արժեքի հարկը,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) պետական տուրքերը,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) տեղական տուրքերը եւ վճարները,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) այլ պարտադիր վճարները,
- ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսները
- գործառնական վարձակալության դիմաց վարձավճարները,
- այլ անձանց պատճառած վնասի հատուցումը,
- տույժերը, տուգանքները եւ գույքային այլ սանկցիաները,
- հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը,
- աշխատողների հավաքագրման ծախսերը.

գ) "գ" բաժնում նշվում են գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերը՝ ըստ Օրենքի 15-րդ հոդվածի:

21. Ռեզիդենտները աղյուսակ 6-ում նշում են Օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ շահութահարկի հաշվարկման առանձնահատկություններով պայմանավորված, ակտիվների եւ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները եւ հարկային բազաները: Ակտիվների եւ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները (3-րդ սյունակ) համապատասխանում են հաշվապահական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքներին, իսկ հարկային բազաները (4-րդ սյունակ).

ա) մշակող ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների) համար՝ սկզբնական (ձեռքբերման) արժեքի եւ շահութահարկով հարկման նպատակով հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերությանը (հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները).

բ) այլ ակտիվների եւ պարտավորությունների համար՝ սկզբնական (ձեռքբերման) արժեքին (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատման արժեքին):